

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 40/2

13 հոկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Էդմոնդ Խաչատրյանի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 19.08.2015 թ-ի թիվ 50/08 որոշման դեմ:

Քաղաքացի Էդմոնդ Խաչատրյանի գանգատում բերված փաստարկները.

Էդմոնդ Խաչատրյանը 22.08.2015 թ-ին ստացել է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 19.08.2015 թ-ի թիվ 50/08 որոշումը «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին», որը կազմում է 170.000 ՀՀ դրամ:

Էդմոնդ Խաչատրյանն առարկում է նշված վարչական ակտի դեմ, քանի որ այն կազմվել է ոչ իրավաչափ և հակասում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենսդրությանը:

Գանգատի հիմքում դրվում է այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի բազմաթիվ ելույթներից ու առանձին արձանագրային որոշումներից խրախուսվում է փոքր և միջին ձեռնարկությունների գործունեությունը ու ՀՀ ՖՆ պետք է աջակցի և խթանի ՓՄՁ-ի գործակցությանը: Հետևապես, 170.000 ՀՀ դրամ տուգանքից հետո, որը ի դեպ նվազել է 200.000 ՀՀ դրամից՝ 30.000 ՀՀ դրամ վճարելուց հետո, արդեն անհնարին է դառնում որևէ գործունեություն սկսելը:

Կատարված խախտումը եղել է ոչ միտումնավոր և կրել է միայն ֆիզիկական ծանրաբեռնվածության բնույթ:

Հաշվի առնելով վերոգրյալը Էդմոնդ Խաչատրյանը խնդրում է սույն որոշումը վերանայել և վարչական ակտի գումարը 170.000 ՀՀ դրամից նվազեցնել կամ հնարավորության դեպքում որոշումը վերացնել:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով քաղաքացի Էդմոնդ Խաչատրյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 17.08.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 170.000 դրամ, որից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված տուգանք 150.000 դրամ, որն առաջացել է 20.08.2013 թ-ի թիվ 1411361 վարչական ակտի հիման վրա, ինչպես նաև նշված ակտով առաջադրված գումարի 10%՝ գումարով 20.000 դրամ:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 19.08.2015 թ-ին ընդունվել է թիվ 50/08 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Էդմոնդ Խաչատրյանից 170.000 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկվող դեպքում Որոշմամբ գանձման առաջադրված գումարն ամբողջությամբ առաջացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀ վարչության 20.08.2013 թ-ի թիվ 1411361 վարչական ակտով:

Վարչական ակտով մասնավորապես արձանագրվել է, որ քաղաքացի Էդմոնդ Խաչատրյանը Երևան քաղաքի Աշխաբադի 2/13 հասցեում զբաղվում է ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ, մասնավորապես՝ 2013 թ-ի օգոստոսի 13-ից իրականացնում է սննդամթերքի մանրածախ առևտուր, որի ընթացքում համախառն եկամուտը կազմել է 14.000 դրամ: Արդյունքում կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությունը՝ գումարով 200.000 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (2013 թ-ին գործող խնբագրության համաձայն) 71-րդ հոդվածի համաձայն. «1. Վարչական բողոքը կարող է բերվել՝

ա) վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում.»:

Նույն հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերության համաձայն. «Բողոքարկման ժամկետը լրանալուց մեկ տարի անցնելուց հետո վարույթի մասնակիցը կորցնում է բողոքարկման ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու հիմնավորմամբ բողոք բերելու իրավունքը, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոք բերելու ժամկետը բաց թողնելը կապված է անհաղթահարելի ուժի առաջացրած հետևանքների հետ»:

Քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀ վարչության 20.08.2013 թ-ի թիվ 1411361 վարչական ակտը Էդմոնդ Խաչատրյանի կողմից ստորագրությամբ ստացվել է 20.08.2013 թ-ին, հետևապես այն ուժի մեջ է մտել 21.08.2013 թ-ից և 6 ամսվա ընթացքում չի բողոքարկվել:

Իր հերթին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

Տվյալ դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀ վարչության 20.08.2013 թ-ի թիվ 1411361 վարչական ակտը հանդիսանում է անբողոքարկելի վարչական ակտ, հետևապես վերջինիս իրավաչափության, ինչպես նաև դրանով առաջադրված պարտավորությունների հիմնավորվածության հարցը, չի կարող հանդիսանալ քննարկման առարկա:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Որոշմամբ պարտավորությունները գանձման են առաջադրվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ենթակա են կատարման:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 19.08.2015 թ-ի թիվ 50/08 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ